

Ծայրադույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոս Գևորգ Զ Խորը վշտով հայտնում է Գեղագույն
Հոգեսր Խորհրդի անդամ, Աղքաբջանի ու Թուրքեստանի
թեմի Առաջնորդ և Հոգեսր ճեմարանի դասախոս

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԸԲՐԱՀԱՄՑՅՈՒՆԻ

մահը. որը տեղի ունեցավ վետրվարի ծին, երկարաժե-
հիվանդությունից հետո:

**ՀՅՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ
ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՑԱԼԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ**

ԷՇՄԻԱԾԻՆ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐք ԵՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Հայկական ՍՍՈ Մինիստրների Սովետին կից Հայ-
եկեղեցու դորձերի Խորհուրդը ցավակցություն է հայտ-
նում Գեղագույն Հոգեսր Խորհրդի անդամ ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍ-
ԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՑՅԱՆԻ վաղաժամ մահվան առթիվ:

**ՀՅՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՐԴ**

7 գետրվար 1918 թ.
Երևան

Գերագույն Հոգևոր Խորհուրդը խորը վշտով հայտնում է Խորհրդի անդամ, Աղբբեջանի ու Թուրքեստանի թեմի Առաջնորդ և Հոգևոր ճեմարանի դասախոս

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԲՐՈՀԱՄՑԵՆԻ

մահը, որը տեղի ունեցավ փետրվարի 5-ին, երկարատև հիվանդությունից հետո:

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի վարչությունը, դասախոսական կաղմը և սաները խորը վշտով հայտնում են Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Աղբբեջանի ու Թուրքեստանի թեմի Առաջնորդ և ճեմարանի դասախոս

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԲՐՈՀԱՄՑԵՆԻ

մահը, որը տեղի ունեցավ փետրվարի 5-ին, երկարատև հիվանդությունից հետո:

Ս. Էջմիածնի Մայր Աթոռի Միաբանությունը և աշխատակիցները խորը վշտով հայտնում են Գերագույն Հոգևոր Խորհրդի և Միաբանության անդամ

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԲՐՈՀԱՄՑԵՆԻ

մահը, որը տեղի ունեցավ փետրվարի 5-ին, երկարատև հիվանդությունից հետո:

„Էջմիածին“ ամսագրի խմբագրությունը խորը վշտով հայտնում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Աղբբեջանի ու Թուրքեստանի թեմի Առաջնորդ և Հոգևոր ճեմարանի դասախոս

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԲՐՈՀԱՄՑԵՆԻ

մահը, որը տեղի ունեցավ փետրվարի 5-ին, երկարատև հիվանդությունից հետո:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐՈՀԵՄՅԵՆ

Սույն թվի փետրվարի 5-ին, հանձինս ներսես Եպիսկոպոս Աբրահամյանի, Մայր Աթոռի միաբանությունը կորցրեց իր լավագույն անդամներից մեկին:

Ներսես Եպիսկոպոսը ծնվել է 1879 թվի օգոստոսի 22-ին Դրիմի Ղարասու-բազար քաղաքում, Ռումինիայից այնտեղ վերաբնակություն հաստատած արհեստավորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է իր ծննդավայրի ծխական դպրոցում. այնուհետև Բիֆլիս մեկնելով ընդունվել է Ներսիսյան Թիմական Դպրոցը: Ներսիսյան Դպրոցի դասընթացն ավարտելուց հետո վերադարձել է իր ծննդավայր Դարասուրագար քաղաքը, ուր տեղական ծխական դպրոցում, որպես ուսուցիչ, պաշտոնավարել է մինչև 1903 թվականը: 1903 թվին ուսուցչի պաշտոնով հրավիրվել է Աստրախան, ուր և 1905 թվին Աստրախանի թեմի Առաջնորդ Արհստակես Արքեպիսկոպոսի հոգմից սկզբում սարկավագ և ապա քահանա է ձեռնադրվել:

Տասնյակ տարիներ նա քահանայագրութել է Անդրկասյան Երկրի բաղաքներում---Զարծոյում, Թերմեզում, Քերքիում, Կոկանդում, Պորտ-Ալեքսանդրովսկում և այլն, ամեն տեղ արժանանալով իր հոռոտ սիրույն ու համակրանքին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ներսես քահանա Աբրահամյանը ռազմաճակատի հոգեւոր հովվի պաշտոնով դատնվել է գործող բանակի շարքերում:

Ներսես քահանա Աբրահամյանը գործոն մասնակցություն է ցույց տվել Հանրություն ձեռնարկություններին, բավական է հիշել Անդրկասյան Երկրում նրա կատարած հան-

դանակությունը հօգուտ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անդրկովկանում ապաստան գտած թուրքահայ գաղթականության, որի համար էլ նա արժանացել է Գևորգ Եղամովիկոսի գովաստանական կոնդակին: Բարձր գնահատենալով Ներսես քահանայի այս աշխատանքները, Գևորգ Եղամովիկոսը այնուհետև նրան շնորհել է լանջախաչ և ավագ քահանայության կոչում:

1918 թվին Ներսես քահանա Աբրահամյանը հաստատվում է Կրասնոդարում քաղաքում: Այսուղեւ նա մեծ մասնակցության է ցուցաբերում Կուրման ապաստանած Հայ գաղթականներին նյութապես օգնելու գործի կազմակերպման:

1919 թվին Բեկգույշանց ավագ քահանայի աշխատակցությամբ կազմում ու հրատարակում է ոռացուցիչ հայկական պատերազմարդ օրացուցիչ (Արմանեական հատուկական կալենդար),

նրա մեջ բազմազան տեղեկություններ զետեղելով Ս. Եջմիածնի, Հայկական եկեղեցիների, Հուշարձանների, Հաւարժնակ վայրերի, Թուրքահայ ժողովրդի մասայական կոտրաձների մասին, և այլն:

Կրասնոդարում Ներսես քահանա Աբրահամյանը հայերեն օրացուցիչ է հրատարակում 1920, 1921, 1922 թվականներին:

Հայաստան տեղափոխվելով նա վարդապետ է ձեռնադրվում և Մայր Աթոռի Միաբանության անդամ ընդունվում, իսկ 1945 թվին Եպիսկոպոս է ձեռնադրվում:

1945 թվի Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից Ներսես Եպիսկոպոսը ընտրվում է Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ:

1945-1946 ուսումնական տարում Ներսես



Եպիսկոպոսը ուսուցչի պաշտոն է վարում նորաբաց Հոգևոր ճեմարանում, վայելելով ճեմարանի սաների սերն ու համակրանքը: 1946 թվին Աղբբեշանի և Թուրքեստանի թեմի Առաջնորդի պաշտոնով մեկնում է Բաքու: Սակայն նա միշտ էլ կապված է մնում ճիմարանի հետ: Ամեն անգամ Մայր Աթոռ այցելելուց նա ներկա էր լինում դասերին, հետաքրքրվում էր սաների աշխատանքով, խրախուսում դասախոսներին, քաջալերում սաներին: Տարեկերշի քննություններին մասնակցում էր մեծ սիրով: Իր համեստ դրադարանի զգալի մասը (գեղարվեստական դրականություն) նվիրել՝ Հոգևոր ճեմարանի գրադարանին:

Հիվանդության պատճառով նա թափվում երկար մնալ չի կարողանում և մի տարուց հետո վերադառնում է Մայր Աթոռ, ուր զբաղվում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի գործերով:

Օժման և հոգարկավորության արարողու-

թյունը կատարվեց փետրվարի 8-ին: Օժման կարգը կատարեց Տ. Կարապետ վարդապետ Ասլամազյանը: Հոգիլ դամբանական խոսեց Տ. Մահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հոգևոր հանիսյանը:

Տաճարում արարողությանը ներկա էր նորին Ս. Օծություն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ը:

Հուղարկավորության թափորը Ս. էջմիածնի վանքից շարժվեց դեպի Գայիանեի վանքը: Դագաղին հետևում էին Մայր Աթոռի Միաբանության անդամները, Հոգևոր ճեմարանի սաները, հանգուցյալի բարեկամներն ու մերձավորները և խոտն բազմություն:

Հանգուցյալի աճյունը ամփոփվեց Մայր Աթոռի Միաբանության դամբարանում: այստեղ դամբանական ճառ խոսեց Հոգևոր ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանը:

Հանգիստ իր աճյունին:

